



California's Protection & Advocacy System

Աշխատանքի ընդունման աջակցությունները/Աշխատանքային խթանների ծրագրերը - Ամշխատավարձային հաշվետվության ամեն ամիս ներկայացումը և հավելյալ սոցիալական եկամուտը (SSI)

Հուլիս, 2020թ. Հրապ. # 5205.10 - Armenian

Այս հրապարակման մեջ բացատրվում է հավելյալ սոցիալական եկամուտ ստանալու դեպքում աշխատավարձային հաշվետվության ներկայացման կարգը և այն, թե ինչու է ձեր աշխատավարձային հաշվետվության ներկայացումն անհրաժեշտ, որպեսզի աշխատելիս չկորցնեք ձեր SSI-ը:

Հավելյալ սոցիալական եկամուտը (SSI) ծրագիր է, որը նախատեսված է հաշմանդամություն, խլություն ունեցող կամ 65 տարեկանից բարձր անձանց համար, որոնք ի վիճակի չեն վճարել իրենց կացարանի, սննդի և առողջության պահպանման ծախսերը:

Եթե համապատասխանում եք SSI-ին, ամսվա առաջին օրը ձեզ կտրամադրվի կտրոն, որպեսզի վճարեք ձեր սննդի կամ կացարանի համար: SSI շահառուներն իրենց համար ստանում են Medi-Cal-ի անվճար ապահովագրական ծածակույթ:

Ինչո՞ւ պետք է ամեն ամիս աշխատավարձային հաշվետվություն ներկայացնեմ

Օրենքն ասում է, որ եթե SSI եք ստանում, պետք է հաշվետվություն ներկայացնեք ձեր աշխատավարձերի մասին:

Ձեր աշխատավարձերը հնարավոր է ազդեն կամ չազդեն ձեր SSI կտրոնի տրամադրման վրա: SSI-ը որոշում է ձեզ վճարվող ամսական գումարի չափը՝ կախված աշխատանքից և այլ աղբյուրներից ստացված ձեր եկամտից: SSI-ի վճարման չափը հաշվարկելիս Սոցիալական ապահովության վարչությունը նույնպես ուշադրություն է դարձնում ձեր կատարած այն ծախսերին, որոնք թույլ են տալիս ձեզ աշխատել:

Ձեր աշխատավարձային հաշվետվությունը պետք է ներկայացնեք ամեն ամիս, որպեսզի հավաստիանանք, որ ձեզ ճիշտ չափով SSI է վճարվում: Ամեն ամիս աշխատավարձային հաշվետվություն ներկայացնելը կօգնի ձեզ խուսափել SSI-ի գերավճարներից կամ կորստից:

Ե՞րբ ներկայացնել աշխատավարձային հաշվետվությունը

Ձեր աշխատավարձային հաշվետվությունը ներկայացրեք այն ժամանակ, երբ ստանաք տվյալ ամսվա վերջին վճարային չեքը: Աշխատավարձային հաշվետվությունը պետք է ներկայացնել ամենաուշը մինչև հաջորդ ամսվա 10-ը: Օրինակ, եթե աշխատում եք հունվարին, աշխատավարձային հաշվետվությունը պետք է ներկայացնեք այն ժամանակ, երբ ստանաք հունվար ամսվա ձեր վերջին վճարային չեքը, սակայն փետրվարի 10-ից ոչ ուշ:

Ո՞վ է պատասխանատու աշխատավարձային հաշվետվության ներկայացման համար

Եթե դուք լիազորված վճարառու եք, աշխատավարձային հաշվետվության ներկայացումը ձեր պատասխանատվությունն է: Լիազորված վճարառուները պետք է ստեղծեն իրենց անձնական **My Social Security** հաշիվը, որպեսզի կարողանան առցանց հաշվետվություն ներկայացնել աշխատավարձերի մասին այն SSI շահառուի համար, որին ներկայացնում են: Ձեր SSI շահառուի համար աշխատավարձային հաշվետվությունը կարող եք ներկայացնել նաև ավտոմատացված հեռախոսային համակարգի կամ աշխատավարձային հաշվետվության ներկայացման անվճար բջջային հավելվածի միջոցով:

Մշակվել է ԱՄՆ հարկատուների միջոցներով

Դուք պետք է աշխատավարձային հաշվետվություն ներկայացնեք, եթե հանդիսանում եք SSI շահառուի ամուսինը (կինը), ծնողը կամ հովանավորը: Ձեր ամուսինը (կինը) պետք է ապրի ձեզ հետ: Ծնողները պետք է ապրեն ձեզ հետ, և դուք պետք է 18 տարեկանից փոքր լինեք: Եթե ԱՄՆ քաղաքացի չեք, ձեր հովանավորը պետք է ներկայացնի աշխատավարձային հաշվետվություն նույնիսկ այն դեպքում, եթե հովանավորը ձեզ հետ չի ապրում:

SSI շահառուների լիազորված վճարատուները, ամուսինները (կանայք), ծնողները կամ հովանավորները SSI ստացող անձի աշխատավարձերի մասին հաշվետվություն կարող են ներկայացնել ավտոմատացված հեռախոսային համակարգի կամ աշխատավարձային հաշվետվության ներկայացման անվճար բջջային հավելվածի միջոցով:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Եթե SSI շահառուի ամուսինն եք (կինը), ծնողը կամ հովանավորը, պետք է հաշվետվություն ներկայացնեք Սոցիալական ապահովության վարչությանը, եթե սկսեք կամ դադարեք աշխատել: Ի՞նչպես ներկայացնել աշխատավարձային հաշվետվություն SSI ստանալիս

Տարբերակ 1. **My Social Security** հաշիվ

Աշխատավարձային հաշվետվությունը կարող եք ներկայացնել առցանց՝ գրանցվելով Սոցիալական ապահովության վարչության կայքում, որպեսզի կարողանաք մուտք ունենալ **My Social Security** հաշվին: Ձեր **My Social Security** հաշվի միջոցով աշխատավարձային հաշվետվությունը ներկայացնելը պարզ և ապահով եղանակ է: Աշխատավարձային հաշվետվությունը **My Social Security** հաշվի միջոցով ներկայացնելուց հետո կարող եք պահել կամ չպահել ձեր ստացականի պատճենը: Ստացականը պահեք ապահով վայրում: Ստացականն ապացուցում է, որ դուք ներկայացրել եք աշխատավարձային հաշվետվությունը:

My Social Security հաշվի բացման համար հարկավոր է գրանցվել Սոցիալական ապահովության վարչության կայքում <https://www.ssa.gov/myaccount/> հղումով և ընտրել «Ստեղծել հաշիվ» (անգլ. "Create an Account")

Մշակվել է ԱՄՆ հարկատուների միջոցներով

Եթե ստանում եք SSI և հաշմանդամության համար նախատեսված այլ նպաստ, օրինակ՝ Հաշմանդամության սոցիալական ապահովագրություն (անգլ. Social Security Disability Insurance, SSDI), SSI-ին և SSDI-ին աշխատավարձային հաշվետվություն կարող եք ներկայացնել հաշվետվությունների ներկայացման առցանց համակարգի միջոցով:

Ծանուցում. եթե ստանում եք SSI և SSDI կամ Սոցիալական ապահովության վարչության այլ նպաստներ, ինչպիսիք են SSDI-ը և Հաշմանդամություն ունեցող այրիների նպաստները (անգլ. Disabled Widow Benefits, DWB) կամ Երեխայի հաշմանդամության նպաստները (անգլ. Child Disability Benefits, CDB), ձեր աշխատավարձային հաշվետվությունը պետք է ներկայացնեք SSI ծրագրին և SSDI ծրագրին: Եթե ձեր աշխատավարձային հաշվետվությունը ներկայացնեք միայն SSI ծրագրին, հնարավոր է վերջում SSDI նպաստների գերավճար ունենաք, քանի որ SSI-ը և SSDI-ը սոցիալական ապահովության տարբեր ծրագրեր են և միմյանց չեն փոխանցում ձեր աշխատավարձերի մասին տեղեկությունները:

My Social Security հաշիվ մուտք գործելուց հետո Աշխատավարձային հաշվետվության էջում (անգլ. Wage Reporting) կտեսնեք ձեր գործատուի անունը: Եթե ձեզ անհրաժեշտ է ներկայացնել այն գործատուի աշխատավարձային հաշվետվությունը, որը նշված չէ աշխատավարձային հաշվետվության էջում, առցանց համակարգի փոխարեն աշխատավարձային հաշվետվությունը պետք է ներկայացնեք Սոցիալական ապահովության վարչության տեղական գրասենյակին:

Տարբերակ 2. Սոցիալական ապահովության վարչության ավտոմատացված հեռախոսային համակարգ

SSI շահառուները կարող են աշխատավարձային հաշվետվությունը ներկայացնել հեռախոսով՝ օգտվելով Սոցիալական ապահովության վարչության ավտոմատացված հեռախոսային համակարգից կամ զանգահարելով և խոսելով Սոցիալական ապահովության վարչության ներկայացուցչի հետ

Էջ 5` 6

Սոցիալական ապահովության վարչության ներկայացուցչի հետ խոսելու համար զանգահարեք աշխատանքային օրերին, ժամը 7 a.m.-ից 7 p.m.-ը: Անվճար հեռախոսահամարն է՝ 800-772-1213 Image կամ 800-325-0778 Image (TTY): Ավտոմատացված հեռախոսային համակարգը գործում է շուրջօրյա:

Տարբերակ 3. iPhone-ի կամ android համակարգով սմարթֆոնի միջոցով

Ձեր աշխատավարձային հաշվետվությունը ներկայացրեք ձեր սմարթֆոնի միջոցով՝ հեռախոսում ներբեռնելով Սոցիալական ապահովության վարչության հավելվածը: Հավելվածը համատեղելի է android և iPhone սմարթֆոնների հետ:

Հավելվածը ներբեռնելու համար այցելեք <https://youtu.be/bXYL1XkC3R4> և սկսեք այս պարզ և ապահով եղանակով ներկայացնել ձեր աշխատավարձային հաշվետվությունը:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. աշխատավարձային հաշվետվությունը մի՛ ներկայացրեք առցանց կամ մի՛ օգտագործեք ավտոմատացված հեռախոսային համակարգը կամ անվճար բջջային հավելվածը՝

- ներկայացնելու աշխատավարձային հաշվետվություն այն գործատուի համար, որը նշված չէ **My Social Security**-ի աշխատավարձային հաշվետվության ներկայացման էջում
- առաջին անգամ աշխատանքային գործունեության մասին հայտնելու համար
- աշխատավարձային հաշվետվությունը ժամկետը լրանալուց հետո ներկայացնելու համար
- ներկայացնելու ինքնազբաղվածությունից ստացվող եկամուտները
- ներկայացնելու ձեր հաշմանդամության կամ կուրության պատճառով աշխատանքի համար կատարված ծախսերը, օրինակ՝ հիվանդությանն առնչվող աշխատանքային ծախսերը (IRWE) կամ կուրությամբ աշխատելու ծախսերը (BWE)
- հետևելու ձեր առաջընթացին կամ ներկայացնելու ծախսերը, եթե մասնակցում եք ինքնուրույն կենսակերպ ձեռք բերելու պլանին (PASS)

Մշակվել է ԱՄՆ հարկատուների միջոցներով

Վերոնշյալ գործողություններից ցանկացածի համար պետք է կապվեք Սոցիալական ապահովության վարչության ձեր տեղական գրասենյակի հետ: PASS պլանի մասնակիցները պետք է կապվեն իրենց սպասարկող PASS աշխատակիցներին:

Տարբերակ 4. աշխատավարձային հաշվետվության ներկայացում փոստով

Մենք սովորաբար խորհուրդ չենք տալիս աշխատավարձային հաշվետվությունը ներկայացնել փոստի միջոցով: Ձեր աշխատավարձերի վճարման կտրոնները կարող են կորել, սխալ հասցեով առաքվել, կամ ձեր աշխատավարձային տվյալների մշակումը կարող է ուշանալ, ինչի արդյունքում SSI նպաստի գումարը կարող է սխալ հաշվարկվել: Եթե չեք օգտվում փոստից, խորհուրդ ենք տալիս ձեր աշխատավարձերի վճարման կտրոններն ուղարկել պատվիրված նամակով: Չմոռանաք, որ պատվիրված նամակ ուղարկելու համար վճար է գանձվելու, մինչդեռ աշխատավարձային հաշվետվությունն առցանց, հեռախոսով կամ անվճար բջջային հավելվածի միջոցով ներկայացնելու համար վճար չի գանձվում: